«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 37/1 01 03 2023թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ԱՕ 5-րդ, 158-162-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 11.08.2005 թիվ 1599-Ն ու 1384-Ն որոշումների պահանջները և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 28.02.2023թ. № 39/1 - L հրամանը՝

հրամայում եմ.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ աշխատողների 2023 թվականի ամենամյա արձակուրդի տրամադրման հետևյալ ժամանակացույցը.

ա) ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական աշխատողներին տրամադրել 35 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2023թ. հուլիսի 11-ից մինչև օգոստոսի 19-ը ն (ներառյալ) և 2024թ. հունվարի 3-ից մինչև հունվարի 9- ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

բ) ԵՊՀ ԻՄ տնօրենին, փոխտնօրենին և ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին (ներառյալ՝ բաժնի վարիչներին) տրամադրել 25 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2023թ. հուլիսի 18-ից մինչև օգոստոսի 19-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

գ) ԵՊՀ ԻՄ գրադարանի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ և 5 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 2023թ. հուլիսի 18-ից մինչև օգոստոսի 19-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

դ) ԵՊՀ ԻՄ այլ կատեգորիայի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2023թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 19-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում սահմանված ժամանակացույցից տարբերվող այլ ժամկետներում աշխատողներին ամենամյա արձակուրդ (կամ դրա մի մասը) կարող է տրամադրվել միայն ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ԻՄ աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**